

Մ. Դարբանձը

# ՍՈՒՐԵՆ ՈՒ ՌՈՒՏՈՒՆ



891.995  
7-26

ՊԵՏՀԱՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1936

2011-05

891.995  
7-26

Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՍՈՒԼԴԻՆ

ՈՒ

ՓՈՒԼԴԻՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԳՐԻ ԿԶՈՒՄ  
ԵՎՐԵՎԱՆ

1936

29 MAR 2013

8191

Խմբագիր՝ Ա. Առաստան  
Տեխ. խմբ՝ Գ. Զենյան  
Մրգագրիչ՝ Ս. Շահբաղյան

Հրատ. 3722, Գլուխկ. լիազոր Կ.—1072  
Պատվեր 612, Տիքաժ 5000  
Գետհրատի տպարան,  
Յերկան, Ա Գնունի, 4.

(240)




21155-59

(17770-59)

Վարի մի կողմն ապրում եր Սուլդին, մյուս կողմը՝ Բուլդին. Սուլդին իրենց գյուղում եր հոչակված իբրև ստախոս, Բուլդին՝ իրենց գյուղում։ Սուլդին ստախոս եր, իսկ Բուլդին յերբեք ճշմարիտ բան չեր խոսում։ Սուլդին ծուլ եր, իսկ Բուլդին՝ անբան։

Սուլդին բարձրահասակ եր, նիստ, քիթը սուր, ականջները աղվեսի ականջների նման։ Բուլդին ճիշտ սրահակառակը, —կարձահասակ եր, փորն ուռած, քիթը տափակ, ականջները կախ՝ ավանակի ականջների նման։ Գլուղի աշուղը Սուլդուն ալսպես եր նկարագրում։

Աչքեր ունի պոլոզ-պոլոզ, Գլխին ունի մորթե քոլոզ. Ականջները —աղվեսի պես, Ման ե գալիս խորոզ-խորոզ։ Վոտներ ունի —արագիլի, Բերանը մեծ —վոնց վոր գիլի. Ամեն խոսքը մի-մի փութ ե, Մեջը քննես —լիքը սուտացե։



Իսկ Բուլղուն այսպես.—

Հալա մի տես, ով ե գալի  
Չաղ բաղի պես լնդլնգալի.  
Փորը շինած ստի տոպըրակ—  
Ստեր ե վոր շաղ ե տալիւ  
Ամառ-ձմեռ սուտ ե ցանում,  
Ամեն տեղից սուտ ե հանում.  
Հանդից ել վոր տուն ե գալի—  
Իրենց տունը սուտ ե բերում:

\* \*



Սուլդին ու Բուլդին իրար չելին տեսել: Նրանցից վոչ մեկը գլուղերը բաժանող սարը չեր անցել. բայց նը- րանց փշած ստերը վաղուց հասել ելին միմյանց ականչ:  
Սարը ստերին չեր խանդարել թոչելու իր վըրացից: Սուլ- դին գիտեր, վոր աշխարհիս յերեսին Բուլդի կա, Բուլդին ել գիտեր, վոր Սուլդի կա: Այսքան միայն:

Յերկու գլուղի կատակաբանները մի անգամ կատե- ցել ելին մրցություն կազմակերպել ստախոսների միջև,  
վոր չափեն ստաստեղծների շնորհըն ու տաղանդը, թե նրանցից վհրը կհաղթի, բայց գործը գլուխ չեր յեկել.

Սուլդին ասել եր.

—Աշխարհիս յերեսին գտեք մի մարդ, թեկուզ վար- դապետ, վոր իր որում սուտ խոսած չլինի, բերեք ինձ մոտ, նրա հետ միասին գնամ ստակովի:

Իսկ Բուլդին ել իր հերթին ասել եր.

—Յեթե կարողանաք ճշմարտախոսներին հավաքել մեկ տեղ, միմիայն նրանց մեջ գուրս կդամ Սուլդու հետ ստամարտի:

Վոչ Սուլդու և վոչ ել Բուլդու պահանջը չելին կա-

րողացել իրագործել: Ինչ մարդու ճշմարտախոս ելին ճա- նաշում, փեղի տակից ստի պոչ եր լերնում:

Այսպիսով Սուլդին ու Բուլդին մնացել ելին մի- մէանց անծանոթ:

\* \*

Ուստի եր: Վողջ գլուղը թափվել եր հանդը, վոր ձմեռվա պաշարն ազատի կրակ արեկից ու թոշուններից:

Այդ որերին յեթե հրդեհ պատահեր գլուղում կամ մի այլ դժբախտություն, դժվար թե ձեռը բանի հասնող մարդ գտնվեր, վոր ոգնության վազեր: Տանը մնացել ելին յերեխանները, պառավները, վոր հանդում աշխատող մշակների համար կերակուր պատրաստեն, մեկ ել—հա- վերն ու կատունները:

Աշխատանքի այս կրակ ժամանակ, յերբ մըջունն ել իր բաժինն եր տուն կրում, վոր ձմեռը սոված չմնա, Սուլդին յերկար ու մեկ ձգվել եր տան սրահի թախտի վրա ու... յերեի ստեր եր հնարում:

Սուլդու մայրը մոտեցավ, խեթ-խեթ նաև Սուլդուն ու նախատեց.

—Ա՛յ հողագլուխ, —ասաց, —ինչ ես վեր ընկել լղար ուղտի պես, սաղ աշխարհը կրակ կտրած աշխատանքի յե, դու ինչու չես մի գործի գնում...

Սուլդին շուռ յեկավ մլուս կողքին ու մորը թե՝

—Բա ես գլուղում մի տղամարդ չպետք ել լինի, վոր գլուղը պահի... Գլուղը հո չեմ կարող անտեր թողնել...

—Ա՛ փուչ փշանալու, —գոչեց մայրը զարացած, — գլուղը հո չի կորչում, վոր պահես: Կորչողը հրեն, հան- դումն ե, վոր եսոր եգուց կկորչի, կվերանա: Սոված կը- ստակես, ալ վողործելի, մի կտոր հաց տվող չի լինի, վոր աչքդ կոխես:

Սուլդին աչքերը ճպճպացրեց, ժպտաց ու դարձավ  
մորը, թե՝

— Դարդ մի անիլ, այ նանի, ես աշխարհում ով ե  
մեռել սովից, վոր լես մեռնեմ: Մի կտոր հաց վորտեղից  
լինի կճարեմ:

Բայց վորքան մեծ յեղավ Սուլդու զարմանքը,  
յերբ մայրը, փոխանակ մեղմելու իր զայրութը, հարձակ-  
վեց վրան.

— Դե, վեր կաց կնրի, տեսնեմ քեզ ով ե հաց տալի,  
պահում: Կնրի, աչքիցս, ել չերևաս:


Սուլդին տեսավ, վոր խոսքը կարող ե կորիզ դառ-  
նալ, տեղից վեր կացավ, վոտները քարշ տալով գնաց  
ու հիմի ել մեկնվեց տան առջևը գտնվող թթենու տակ:

Քանի գեռ ծառի վրա թութը կար, ելի լավ եր,  
յերեմն հասածը կաթում եր, կամ ծտերը թութն ուտելու  
ժամանակ թափում ելին Սուլդու համար: Իսկ հիմի թթի  
ժամանակն արդեն անցել եր:

Սուլդին բավական ժամանակ պառկած մնաց, յեն-  
թագրելով, թե մայրը կկանչի հաց ուտելու, ինչպես սո-  
վորաբար անում եր, բայց մայրը կարծես բոլորովին  
մոռացել եր նրա գոյության մասին, իսկ սովը տանջում  
եր Սուլդուն:

Սուլդին մտածեց, մտածեց ու վորոշեց, վոր մի հավ  
բռնի, տանի յերկաթուղու կալարանին կից գտնվող շու-  
կան, ծախի ու իրեն համար ուտելիք առնի: Այդպես ել  
արավ: Իջավ, գոմի աղբածակը փակեց, վոր հավերը դուրս  
չգան, հետո դուռը բաց արավ, ներս մտավ ու անմիջա-  
պես փակեց իր լետեմից:

Հավերը, վորոնք շողից պատսպարվելու համար գոմն  
ելին մտել, անհանգիստ կչկչացին, ճվճվացին խավարի



մեջ, յերբ Սուլդին մոտեցավ թառին, վոր բոնի մեկն ու  
մեկին: Բայց ինչքան կուզելին թող ճվճարին կամ դես  
ու դեն փախս տալին: Սուլդին յերկու հավ բոնեց,  
վոտները կապեց իրարից, դրեց փեշի տակ, գոմից դուրս  
յեկավ ու առանց յետ նայելու, քայլերն ուղղեց դեպի  
կայարան:

Վճաց ե գնում լոք-լոք անելով:

\* \* \*

Յերբ սարերը մնացին Սուլդու յետեր և առջեր բաց-  
վեց դեպի կայարան փովող լախ դաշտն իր փոշոտ ճա-  
նապարհով, Սուլդին նկատեց, վոր իրենից բավական հե-  
ռու մի մարդ, եշը նստած, գնում ե դեպի կայարան:  
Սուլդին քայլերն արագացրեց, վոր հասնի իշավորին,  
զրուցընկեր ունենա:

Հասավ:

—Բարի որ քեզ, աղա,—ասաց Սուլդին:  
—Ասծու բարին, պարոն, —պատախանեց իշավորը:  
—Յես պարոն չեմ, —նեղացավ Սուլդին, —պարոնն  
իշին կասեն, յես հո անհասկացող չեմ:  
—Բա դու ինչո՞ւ յես ինձ աղա ասում, յես հո կծո-  
տող չեմ:

—Դե լավ, ախալեր ջան, մի նեղանա. աստված քեզ  
ենքան կարողություն տա, վոր ձիով ման դաս ու եց  
ինձ բախշես, —ասաց Սուլդին:

—Քեզ ել ենքան կարողություն տա, վոր կովեր  
ունենաս, հավերդ ինձ փեշքաշ անես, —ասաց իշավորը:

Մի առժամանակ լուռ մնացին, աչքով զննելով իրար,  
վոր մոտվոր գաղափար կազմեն միմյանց մասին: Լոռու-  
թյունը խախտեց Սուլդին.



— Ախալեր ջան, — ասաց նա, — հարցնելու ամոթ չլինի, ես շոգ կըսակին ի՞նչ կարեռ գործ ունես, վոր գնում ես կայարան:

— Ամոթի ի՞նչ բան կա, — պատասխանեց իշավորը, — հունձը վերջանալու վրա լե, շուտով կալերը կալելու սկսելու յեն. դե, դիտես, ելի, կալի փոշին ու մղեղը մի կողմից, շոգն ել մլուս կողմից կալավորին նեղելու յեն: Մեր վողջ գյուղն իմ հուսովն ե ապրում: Տասնհինգ հազար վագոն ձմերուկ եմ պառիրել, վոր Կախեթից բերեն, ժողովուրդը ձեռից չգնա: Գնում եմ, տեսնեմ ի՞նչ յեղավ, ինչու յեն ուշացնում: Դե, ախալեր ջան, հարցնելը, վոր ամոթ չի, դու ել քոնն ասա, թե ի՞նչի յես գնում:

— Իմ գործը շատ հասարակ բան ե, — ասաց Սուլդին. — Ես հավերը, վոր տեսնում ես, սրանցից մի քանի հազար հատ ունեմ, տանում եմ առաջարկեմ, վոր զորքի համար առնեն:

— Հավաք միտք ե, — հավանություն տվեց իշավորը, — միայն թե ենակես արա՛ չխաբվես, հավերը մորթած ծախի, վոր փետուրը քեզ մնա, փափուկ բարձեր շինես:

— Յես հավի փետուրով լցրած բարձի վրա չեմ քընում, կոշտ ե, դրա համար սագի բմբուլ եմ գործ ածում. հրեն տանը մի յերեսուն հազար հատ բարձ ունեմ հրուրիս համար, — ասաց Սուլդին:

— Կեցցես, — ասաց իշավորը, — մարդ պետք ե իր հրուրերին լավ պատիվ անի, վոր ինքն ել լավ պատիվ ունենա: Ա՛յ, որինակ, ինձ մոտ, մեր տուն, որական մի հինգ հազար հրուր ե գալիս: Ախալորս ասեմ, վոր դու յես, նրանց համար քսան հազար վոչխար եմ մորթել տալիս, միսը գցում եմ շներին, իսկ հրուրերիս մենակ թոքի ու լարդի խորոված եմ ուտեցնում:

— Ճշմարիտ ե, իմացել եմ, պատմել ես: Ինձ մոտ ել, մեր տուն, որական մի քսան հազար հրուր ե գալիս: Հացի փոխարեն ջարդում եմ հարյուր հազար ձու, սպիտակուցը դեն ածում, իսկ դեղնուցը հացի պես թխել տալիս, գնում հրուրերիս առաջ: Մի հալա լետ նայիր, ախալեր ջան, տեսնում ես են հեռվում յերևացող սպիտակ սարը. հենց կիմանաս, թե ձուն ե՛ չխաբվես, դա իմ ջարդած ձվերի կճեպներից գոյացած սարն ե, ուրիշ բան չկարծես: Ես կողմն ել մի գետ ե հոսում, դա ել իմ դեն ածած ձվի սպիտակուցն ե, — ասաց Սուլդին աչքերը ճըպճըպնելով:

— Ճշմարիտ ե, — ասաց իշավորը, — եղ սարի վորսն անպակաս ե. Եղ կճեպներից ամեն մարտ ամսին ճուտեր են դուրս գալիս, դառնում կաքավ, բայց վնչ վոք չի կարողանում վորսի գնալ, սարը մարդու վոտի տակ փշրվում ե. մենակ յես եմ, վոր արծիվը հեծած՝ վերեկից եմ կոտորում:

Սուլդին ուղեց մի բան ել ինքն ասի, յերբ դիմացից մի ծանոթ ձիափոր դուրս յեկավ ու ծիծաղելով թե՝

— Բարով, հազար բարի, այ Բուլդի, բարով հազար բարի, այ Սուլդի, եղ վրատեղից եք իրար պատահել ու քաղցր զրուց եք անում:

— Մենք միշտ միասին ենք ճամփորդում, — ասաց Բուլդին, վոր առաջին անգամ եր տեսնում Սուլդուն:

— Տնաշեն, մենք մի որորոցում ենք մեծացել, հարցնում ես, թե վրատեղ ենք պատահել իրար, — ասաց Սուլդին:

Սուլդին ու Բուլդին հասան կայարան ու պայման կապեցին, վոր ամեն մեկն իր գործը վերջացնելուց հետո, յերեկոյան հանդիպեն գոմի մոտ, վոր գիշերը միասին քնեն գոմի կտերը, մինչև լուսանա ու վերադառնան — ամեն մեկն իր գլուղը:

\* \*  
Լուսնկա գիշեր եր:


Սուլդին ու Բուլդին պառկել ելին գոմի կտերը:  
Բուլդին մի պատմություն սկսեց:

—Ե՛, Սուլդի ախաղեր, լուսնակը տեսա, ջահելությունս  
միտս ընկավ: Հե՞ գիտի անցած որեր... Մի ամառ սա-  
րումն ելինք: Մեր կովերից մեկը կորավ: Բարձրացա դի-  
մացի սարի գագաթը, վոր տեսնեմ հո չի լերևում: Դես-  
նայեցի, դեն, մին ել տեսնեմ հեռու, շատ հեռու, լոթը  
սարի հետև մի բան ե կարմրին տալիս սարալանջին: Յե-  
կա տուն, մորս հայտնեցի, թե կոմք ենտեղ ե, գնում եմ  
բերեմ: Մարս թե՝ «Եղքան հեռու տեղ ինչպես կարող  
ես գնալ մենունենակ: ճանապարհին մի փորձանք կպա-  
տահի, գալի կամ արջի կհանդիպես»: Ինչ գալ, ինչ արջ  
կամ աղվես, ով ե վախեցողը... Մի հաց դրի թաշկինա-  
կիս մեջ, կապեցի մեջքիս, ճանապարհվեցի:

Տնից վոր դուրս լեկա ուղիղ վեց տարին, վեց ամի-  
սը, վեց շաբաթը, վեց որը, վեց ժամն ու վեց ըռպեն լրա-  
ցըրած տղա ելի:

Գնացի, գնացի, որը մթնեց: Հեռվից տեսնեմ մի  
բան ե սպիտակին տալիս: Մոտեցա, տեսնեմ մի սունկ,  
կոթը լոթը կաղնի ծառի բնից հաստ, գլուխը... դե՛, դը-  
լուխն ել ինչքան մեծ ու լայն կլիներ, են ել դու հաս-  
կացիր: Ես սունկի տակ կրակ արի, մի ծայրից քիչ խո-  
րովեցի, կերա ու տակը պառկեցի, քննեցի:

Առավոտը դեռ լուսը չեր բացվել, վոր լսեցի, թե  
ինչպես մի մարդ կացինը ձեռքին սունկը կտրում ե: Տե-  
ղիցս վեր թռա, մարդուն մոտեցա ու բարկացած հար-  
ձակվեցի վրան, թե ինչու լե տանս սյունը կտրում:



—Մշակներ ունեմ, —ասաց մարդը, —արտս հնձում  
են, լեկել եմ, վոր սունկը կտրեմ, տանեմ կերակուր  
պատրաստեմ մշակներիս համար,

—Ի՞նչ մշակ, ի՞նչ բան, —ասացի, —լեկել ես տունս  
քանդում, թե մշակներդ ուտելու բան չունեն...

Կացինը խլեցի մարդու ձեռից, խոկեցի ու ճանպար-  
հըս շարունակեցի:

—Վայ, —բացականչեց Սուլդին, —ուրեմն եղ դժու-  
լես լեղել հա... Եղ մարդը հո իմ հայրն ե լեղել...



—Շատ հավանական ե, —ասաց Բուլդին, —լերես-  
հարքդ նրան նման ե թվում: Բայց, ականջ արա, տես  
հետո ինչ պատահեց: Գնացի, գնացի, —շարունակեց Բուլ-  
դին, —հասա են սարին, վորի լանջին լերևացել եր կար-  
միր բանը: Մոտեցա ու ինչ տեսնեմ... Ես կարմիր բանը  
մորի լե: Սոված ելի: Կացինը քաշեցի ու ես մորին սկը-  
սեցի կտրտել: Մի մասը կերա, բայց մորին ելի մորի  
մնաց: Միտք արի, միտք, թե ափսոս ե, վոր ես մորին  
եստեղ փչանա, ավելի լավ ե, ասի, տանեմ մեր զլուղը,  
վոր ժողովուրդն ուտի, լիանա: Բայց եղքան մեծ մորին  
տեղից շարժել կլինի...

Ի՞նչ անեմ, վո՞նց  
 անեմ...Կացինը քա-  
 շեցի ընկա ծառերի  
 ջանին: Մոտ յերեք  
 հազար ծառ փրթե-  
 ցի սալլ շինեցի, մո-  
 րին կտրեցի, դցեցի  
 մեջը: Հիմի լծկան  
 չունեմ, վոր սալլը  
 գլուղը հասցնի: Դես  
 դեն ընկա, յերկու  
 նապաստակ բոնե-  
 ցի, լծեցի, մի մու-  
 կըն ել բոնեցի դրի  
 սալլի դլխին, ճիպո-  
 տը դրի թաթին:  
 Մուկը քշեց, սալլը  
 շարժվեց:

Մի քիչ անց՝ որը խավարեց, ել արև չի յերկում:  
 Մտածեցի, վոր յեթե եսպես շարունակվի, ճանապարհը  
 կմոլորենք, կկորչենք: Սալլը թողի ճամփի կիսին, ինքոս  
 բարձրացա սարի կատարը, վոր ճայն տամ արեի վրա  
 ապրող մարդկանց, իմանամ՝ ինչու յեն արեի յերեսը  
 ծածկել:

Ճայն տպի, սար ու ճոր դմբդմբաց, ինչ շունչ  
 արարած կար՝ փախավի: Արծիմները դուրս թռան իրենց  
 ըներից: Մի արծիվ ուզեց մոտովս թոչի, գլխիցը բոնե-  
 ցի, թռա, վրեն նստեցի ու քշեցի դեպի արեր:

Համնեմ ինչ տեսնեմ... Մի քանի հազար-հազար մի-  
 լիոն չիբուխի դլուխ՝ ես արեին դեմ են արել, թամբա-



քուն վառել, ծխում են: Եղ ծխիցն ե, վոր արևի յերեսը  
ծածկվել ե:

Զիբուխներից մեկի գլուխը թափ տվի, դատարկեցի,  
արծվին դրի մեջը, փափախովս չիբուխի բերանը ծածկե-  
ցի, վոր արծիվը չփախչի, ու ինքս չիբուխի կոթովն իջա-  
ցած, վոր տեսնեմ՝ ետ ովքեր են, վոր ծխում են ու  
ծխով ծածկում արևի պայծառ յերեսը:

Իջա, իջա, ընկա Անգլիափի հողը: Տեսնեմ ես անդ-  
լիացիք են իրեց չիբուխներն արևից վառում ու ծխում:

—Վո՞նց թե, —ասացի, —դուք սաղ աշխարհը խավա-  
րի մեջ եք թողնում ձեր չիբուխի ծխով. դա ինչ մարդա-  
վարություն ե...

Ես Անգլիա կոչվածը տարին տասներկու ամիս ա-  
րևի յերեսը չի տեսնում:

—Զիբուխներդ լետ քաշեցեք, —ասացի, —թող աշ-  
խարհն արև որ ունենա:


Սրանք վախեցան: Զիբուխները լետ քաշեցին:

Մի գրագետ մարդ գտա, հրամայեցի, վոր գրի՝  
Ծիելն Արգելված ե:

Ես մարդը գրեց: Թուղթը վերցրի, չիբուխի միջից  
հանեցի արծվին, տեսնեմ ես արծիվը ճուտեր ե հանել:  
Արծվի ճտերը ջերս ածեցի, նստեցի արծվին, ելի թու-  
դեպի արևը:

Տեղ հասա, տեսնեմ արև չկա: Բանից դուրս  
լեկավ, վոր մինչև իմ իջնել-բարձրանալը, ամառն  
անցել ե, ձմեռնացել, ու արևս ել սառել, դարձել ե լու-  
սին:

Զեռքիս թուղթը կպցրի լուսնի ճակատին ու ինքս  
լետ թուա դեպի իմ սալլը:



(7770-59) (240) 21155-59



Հիմի են վոր լուսնի վրա խավար կետեր են յեռում, Սուլդի ախպեր, եդ իմ կպցրած թուղթն ե, վրան գրված, ինչպես ասացի, Ծնելն ԱՐԳԵԼՎԱԾ Ե:

Բայց ճամբորդությունից ոգուտ չունեցա: Յետ յեկա տեսնեմ սալը չկա:

— Սպասիր, սպասիր, Բուլդի ախպեր, սալիդ պատմությունն ել յես անեմ,—ասաց Սուլդին ու շարունակեց:—Հայրս վոր կացինը խլել տալուց հետո տուն յեկավ, վախից լեզուն կապ եր ընկել: Մի որ մնջված մնաց: Յերկրորդ որը պատմեց գլխին յեկածը: Ամբողջ գյուղը թուր ու թվանք առած դուրս յեկանք ու ճանապարհեցինք դեպի հորս հետ պատահած դեպի տեղը:

Կես ճանապարհին հանդիպեցինք քո սալին: Յենթադրելով, թե դու վախից փախել ես, սալը քշեցինք ուղիղ գյուղի մեջ տեղը:

Ժողովուրդը հավաքվեց, թափվեց սալի գլխին: Մորին կտրտեցինք, բաժին-բաժին արինք: Վողջ գյուղով մի տարի կերանք, մնացածն ել թթու դրինք: Ես ե յերեսուն տարի յե անցել եդ որից, մորու թթուն դեռ չի հատել: Յեթե վոտդ մեր տունն ընկնի, համեցեք քեզ եդ քո մորու թթվիցն ուտեցնեմ:

Ինչ վերաբերում ե մկանն ու նապաստակին, մուկը մեր գյուղի գզիրն եւ Ամուսնացավ, յերեխաների, հարսների ու թուների տեր դարձավ: Գյուղի կեսը համարյա գզրանք են, վոր կան .իսկ նապաստակներին սար տարանք: Նրանք ել են բազմացել: Մեր գյուղի կովերն են, նրանց կաթովն ենք ապրում:

Նապաստակների մորթուց...

Սուլդին ուզեց շարունակի, բայց Բուլդին արդեն խոմժում եր:

Լուսը բացվում եր:

\* \*

Սուլդին ու Բուլդին յերբ արթնացան, արեն արդեն բավական բարձրացել եր: Բուլդին անհարմար համարեց, վոր ինքը հեծնի իր եշը: Եշն առաջ արին ու յերկուսն ել վոտով ճամփա ընկան:

Շող եր: Մի կողմից թեժ արեն եր նեղում, մլուս կողմից ճանապարհի փոշին: Ճանձերն ել հարձակվում են ու անհանգստացնում և՛ Սուլդուն, և՛ Բուլդուն:

Գնում ելին լուս: Յերկուսն ել քաղցած ելին, տըամադրություններն ընկած: Վոչ Սուլդին հետաքրքրվեց Բուլդու ձմերուկների պատմությունով, վոչ ել Բուլդին հարցրեց Սուլդուն—նրա հավերի մասին:

Գիշերվա անքնությունից գնալիս որորվում ելին Սուլդին ու Բուլդին և ծուլորեն քշում սեաձանձերին, վորոնք իջնում ելին նրանց կեղտոտ յերեսներին:

— Ես անտեր ճանձերն ել թամամ հոգի հանեցին, — դանդատվեց Սուլդին:

— Հոգի հանեցին, — քմծիծաղով ասաց Բուլդին, — եդ քեզ են տեսել, վոր հոգիդ հանում են, իսկի տես մի հատ ել ե ինձ վրա կմ... իսկի կհամարձակվեն մոտենան...

— Ի՞նչ ես անում, վոր քեզ չեն նեղացնում, մոտ չեն գալիս, — հարցրեց Սուլդին, թեև լավ տեսնում եր, վոր Բուլդու վրա ել ճանձեր կան:

— Ի՞նչ եմ անում, — պատասխանեց Բուլդին, — միտդ

չի, վոր անցյալ տարի վոչ մի ճանձ չկար աշխարհիս յերեսին:

—Միտու ե, վոնց չե. վոչ մի հատ ճանձ չկար հեռու ես ժամանակ. սաղ ժողովուրդը զարմացած եր մնացել, —համաձայնվեց Սուլդին: —Ինչի՞ցն եր:

—Հարցնում ել ես... ինձ ճանաչում են, յես սրանց տերն եմ, —ասաց վոգիորված Բուլղին, —ինձ Բուլղի կամեն: Անցած գարնանը քաղաքից մի հարուստ մարդ եր յեկել մեր գյուղը, վոր խոզ առնի: Հարց ու փորձ արի, թե խոզն ինչին ե պետքը, ես հարուստ մարդն ել թե՝ «Յես սապոնի գործարան» ունեմ, խոզն առնում եմ, վոր յուղից սապոն յեփեմ»: Ասացի մի բան, վոր սապոնը յուղից են յեփում, ել ինչո՞ւ յես գուր տեղը վող ծախսում խոզի վրա, յեկ պայման կապիր հետո, ընկերանանք, ինչքան ճանձ կա բոնեմ, բերեմ, նրանց յուղից սապոն յեփի:

Ես գործարանի տերը համաձայնվեց: Ել ինչ յերկարացնեմ: Ինչքան ճանձ կար, հավաքեցի, լցրի տակառների մեջ ու տարա քաղաք: Յերկու հարլուր հազար տակառ ճանձի յուղից սապոն յեփեցի, բան...

—Լավ, Բուլղի ախպեր, բա ես տարի ինչու չես հավաքում, յես ել պարապ մարդ եմ, ընկերանամ, քեզ կողնեմ, —հարցրեց Սուլդին:

—Ես տարի... Միտք չունի, քիչ են, դեռ չեն բաղմացել, համ ել... չես տեսնում մանր են ու լղար, թող չաղանան. մեկ չի, ինձանից վոչ ուտելիք են ուզում, վոչ հազնելիք, մինույն ե՝ վերջն ելի իմ ապրանքն են, թող ապրեն, շատանան, մեծանան, չաղանան, թե չե լղար ճանձի յուղից լավ սապոն չի յեփի: Են կոշտ ու անփլր-

փուր սապոնը վոր կա, լղար ճանձից են յեփել: Ինչ վերաբերում ե քեզ ընկերացնելուն, աչքիս վրա: Մենք հին աղուհացակեր ենք. կընկերանանք, մինչև մահ ու գերեզման միասին կաշխատենք:

—Այ, տերը կյանքդ յերկար անի, Բուլղի ախպեր, ասաց Սուլդին, —դու վոր եղքան լեն սիրտ ունես, յես ել իմ գործը քոնին կմիացնեմ, մեկտեղ կաշխատենք:

—Քո գործի անոնցն ինչ ե. հավերից զատ ուրիշ բանով ել ես պարապում, —հարցրեց Բուլդին:

—Հավերը... Հավերն ինչ են վոր... Հավերից յեկած ոգուալը մանր ծախսերի համար ե: Գործ եմ ասում, գործ... Դե, վոր դու քո գործի գաղտնիքը բաց արիր, յես ել իմն ասեմ, թե չե ընկերության մեջ, վոր գաղտնի բան մնա, գործն ել կիմավի, ընկերների մեջ ել անհամություն կպատահի: Ախպորս ասեմ, վոր դու յես, իմ գործը կրիաների հետ ե: Այ, տեսնում ես, հրեն մի կրիա խշախլշտացնելով խոտերի մեջ ե ման գալիս, մյուսը ջրի մեջ ե լող տալիս: Սրանք իմ ապրանքն են: Իրենց համար ապրում են, ինձանից վոչ ուտելիք են ուզում, վոչ հազնելիք, քո ճանձերի պես: Աշնանը բոլորին հավաքում եմ ու խուզում: Ամեն մի կրիալի վրալից ամենապակասը տասը փութ բուրդ եմ խուզում, ուղարկում քաղաք: Այ, որինակ, եղ հագիդ բրդե շալվարն իմ կրիաների բրդից են գործել, —պարծանքով ասաց Սուլդին:

—Զեռքդ տուր, ձեռքդ տուր, ախպեր ջան, —բացականչեց Բուլդին, —թող մեր ընկերությունը հաստատ մնա: Թող մեր գործի գաղտնիքը վոչ վոք չիմանա: Ես ե յես եմ ու դու, մեկ ել իմ եշը, վորը վոչ վոքի վոչինչ չի ասի. թեև ամեն բան հասկանում ե, իմաստուն ե, ուրիշ

Եշերի պես չգիտենաս որան. ավետարանը ծալրից ծալր  
անդիր գիտե, ժամանակին տիրացու յե յեղել...

Սուլդին ու Բուլդին ընկերության դաշն կնքեցին և,  
տրամադրությունները բարձր, առաջ շարժվեցին ապագա  
մեծ գործի ծրագիրը մտքներումը քննելով:

Անցնում ելին մի գլուղի մոտով, վորի ծալրին, ճա-  
նապարհի մոտ, մի ծառ կար:

Բուլդու եշը թեքվեց ճանապարհից ու վազեց դեպի  
ծառը, վոր ստվերի տակ կանգնի, գոնե մի քիչ հանդըս-  
տանա իր տիրոջ ճանձերից:

Սուլդին ու Բուլդին ել վորոշեցին հետևել իշխ որի-  
նակին:

— Արի ես ծառի տակի փափուկ քարին քիչ նստենք,  
հանգատանանք, մինչև արել թեքի, հոմլ ընկնի, — առա-  
ջարկեց Բուլդին:

Սուլդին չառարկեց: Նստեցին ծառի ստվերում:

Մի կին եր անցնում՝ ջրով լիքը կուլան ուսին:  
Բուլդին խնդրեց կնոջը, վոր խմելու ջուր տա:

Կինը թե՝  
— Ճամբորդ մարդիկ եք, սոված կլինեք, համեցեք մեր  
տուն, հաց անուշ արեք:

— Ի՞նչ ես ասում, քուրիկ, ինչու նեղություն տանք:  
Համ ել... շատ կուշտ ենք: Ենքան կերել ենք, վոր չենք  
կարողանում կերածներս մարսենք, — ասաց Բուլդին:

— Դրուստ ե ասում, քուրիկ, յերկուսով մի վոչխար  
ենք կերել, մի տակառ գինի խմել վրան, տեղներիցս  
չենք կարողանում շարժվենք: Ա՛յ, շատ մեծ լավություն  
արած կլինես, յեթե մի աման թան բերես, խմենք, կե-  
րածներս մարսենք, — վրա բերեց Սուլդին:

— Թան չունենք, բայց քիչ համբերեցեք, իսկուն մի  
աման մածուն կբերեմ, — ասաց կինն ու վազեց դեպի տուն:

Սուլդին ու Բուլդին նայեցին միմյանց և լուռ գոհու-  
նակություն հայտնեցին նման աջող յելքի համար:

Քիչ անց՝ կինը մի աման մածուն, մի հաց, յերկու  
գդալ ու մի փարչ ջուր խոնչի<sup>1</sup> վրա դրած բերեց, դրեց  
Սուլդու և Բուլդու առաջ ու ինքը գնաց:

Սուլդին ու Բուլդին հացը բրթեցին մածնի մեջ, վրան  
ջուր լցրին, խառնեցին ու գդալները պատրաստ ուզում  
ելին ուտելն սկսեն, Բուլդին թե՝

— Սուլդի ախաղեր, արի մի բան ասեմ:

— Հրամայիր, Բուլդի ախաղեր:  
— Ասում եմ յեկ ես մածնաբրդումն եսպես թողենք  
մնա, մենք պառկենք ու մի թեթև քնենք: Ով վոր լավ  
յերազ տեսնի, մածունը մենակ նա թող ուտի: Թե չե ես-  
քանը վոչ իմ կերածը կմարսեցնի, վոչ քո, յեթե յերկու-  
սով ուտենք:

— Ի՞նչ եմ ասում, լավ խոսք ե, լավ առաջարկ ե. մի  
կուշտը յերկու սովածից լավ ե, — համաձայնեց Սուլդին:

Խոնչալով մածնաբրդումի բերանը ծածկեցին ու պառ-  
կեցին քնելու—մեկը յերեսն ալս կողմը, մյուսն այն  
կողմը:

Քաղցած փորով աչքերին քուն չի գալիս: Շուտ—  
շուտ շրջվում են, միմյանց նայում, դարձալ շրջվում:

Շատ եր անցել, թե քիչ, Սուլդին լսեց, վոր Բուլ-  
դին խոմփացնում ե: Տեղից վեր թուավ, զգուշությամբ  
վերցրեց խոնչան, գդալը քաշեց, մածնաբրդումը խպշտեց,  
նորից խոնչալով ծածկեց դատարկ ամանը և... հիմի վոր  
խկապես յերկար ու մեկ ձգվեց ու քուն մտավ:

<sup>1</sup> Խոնչալով մատուցարան:

Սոված փորով մարդու քունը կտանի, ձեզ եմ հարց-  
նում: Չի տանի:

Ալդպես ել Բուլղին չկարողացավ լերկար քնել: Վեր  
կացավ Բուլղին ու հրում ե Սուլդուն:

— Վեր կաց ե, վեր կաց, այ տնաշեն, որը մթնեց,  
վեր կաց լերազս պատմեմ, — կանչում ե Բուլղին:

— Կաց, կաց, քեզ մատաղ, Բուլղի ախպեր ջան, մի  
քիչ համբերի, լերազս կիսատ ե, — քնի միջից ասաց Սուլ-  
դին:

— Վեր կաց, վեր կաց, կիսատ պատմիր, ինչքան տե-  
սել ես, ենքանը պատմիր, — պնդեց Բուլղին:

Սուլդին նստեց տեղը, աչքերը տրորում ե:

— Տրորի, տրորի, քունդ փախցրու, վոր լավ ականջ  
դնես լերազիս, — ասաց Բուլղին:


— Դե, դու պատմի, իս աչքերս տրորեմ, մինչև կի-  
սատ մնացած լերազս միտու գա, — ասաց Սուլդին:

Սուլդին աչքերն ե տրորում, Բուլդին սկսեց պատ-  
մել.

— Ախպորս ասեմ, վոր դու իս, աչքս կպավ թե չե-  
ընկա մի հարսանիք: Ես ում հարսանիքն ե, ումը չի:  
Ասացին — շան իր տղալին հարսանիք ե անում, լավ ե  
վոր իեկել ես. քո յետեից մարդ եր ուղարկելու: Կանչե-  
ցին, նստացրին սուփրի գլխին: Ել ինչ խորոված, ինչ  
փլավ, ինչ գինի ու շարբաթ... կերա, կերա, ենքան կե-  
րա, վոր փորիս ցավիցը վեր թռա: Դե, շուտ արա, հմի ել  
դու պատմի, համա կարճ կապի, ուշանում ենք:

— Աչքիս վրա, Բուլդի ախպեր, կարճ կապեմ, — ասաց  
Սուլդին:

— Յես ել հենց գլուխս ցած դրի թե չե՝ ինչ տեսնեմ...



Տեսնեմ դու շահի հարսանիքում քեզ ես անում, փլավ ես  
ուտում, գառան խորոված ես անուշ անում, շարբաթ ես  
խմում, մի խոսքով դու ինձանից լավ գիտես, թե ինչ  
կար շահի սուվրի վրա: Հա: Քեզ յերանի տվի, վոր եղ-  
քան բախտավոր ես, իսկ յես խեղճ ու կրակ, վողորմելի:  
Բայց չնախանձեցի, ինքս ինձ ասեցի, — ես լավ ե, վոր  
ընկերս ենտեղ կշտանում ե, քեզի մեջ ե. վեր կենամ  
գլխիս ճարը տեսնեմ: Եղակս ել քեզ քեզի մեջ թողի ու  
ինքս վեր կացա մածնաբրդուճը կերա:

— Կերամ... — սարսափահար բացականչեց Բուլղին:

— Հրամանք ես, կերա, — հանգիստ պատասխանեց

Սուլղին:

— Հանաք ես անում, թե սուտ ես ասում, այ Սուլ-  
ղի, — բորբոքված հարցրեց Բուլղին:

— Ինչ հանաքի տեղ ե, վոր հանաք անեմ: Ինչ կվե-  
րաբերի ստին, յես իմ որումը սուտ խուած չկամ:

Աչքերը տրորելուց դադարեց Սուլղին, վորն իր վողջ  
կլանքում առաջին անգամ ճշմարիտ բան եր ասել և  
նայեց Բուլղու ալլալլված դեմքին:

Բուլղին խոնչան դեն դրեց ու համոզվեց, վոր Սուլ-  
ղին իրոք սուտ չի խոսում:


Ել նման մարդու հետ ընկերություն անել կլիներ...

Բուլղին առանց մի խոսք ասելու, վեր կացավ տեղից,  
հեծավ իր եշը և ինչքան ուժ ուներ քշեց:

Սուլղին վաղեց յետեից գոչելով.

— Բուլղի ախպեր, եշդ կամաց քշիր, միասին գնանք,  
բա մեր ընկերությունը մինչև մահ գերեզման վժրտեղ  
մնաց... Բուլղի ախպեր, կաց, բան եմ ասում, բա մեր  
պայմանը... ճանճերը... կրիաները...

Բուլղին իսկի յետ ել չնախեց:  
Մինչև որս ել Բուլղին դեռ քշում ե իր եշը, իսկ  
Սուլղին նրա յետեից վաղում ե, վոր հասնի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0399337

8191

ԳԻԱԸ 50 ԿՈՊ.

М. ДАРБИНЯН  
СУЛДИ и БУЛДИ  
ГИЗ ССР АРМЕНИИ